



16. ԱՅՄԱԴ ԱՂԱ ԵՎ ՉՐԻ ԱՂԱ

Ախքնծորու Ահմադ աղեն, Թախթալվա Չրի աղեն, երկուսն էլ շատ կտրիճ մարթ են, շատ գող մարթ են:

Էն մեկ օր Ահմադ աղեն ծիու մի սալլխ մ'երաց, ասիղեն, օր շատ աղեկ քյառել ծի մի մարթու մե կա:

Էլավ կղաստ երաց էտ գեղեն, կննց: Կըննց էտոնց գյերեզմըներ: Տեսավ օր շուտ էր, ասաց. «Փշում նստիմ էստեղ, չուր մուք տա, բանքյի էրթամ էն ծին գողնամ, տանիմ»:

Չրի աղեն էլավ էն էլ էտ ծիու սալլխ էրիւր ա: Էն օր Չրի աղեն էլ էլավ քյննց էն ծիու գողութին: Էն էլ տեսավ, որ շուտ է, ասաց. - Փշում նստիմ էսա գյերեզմներու մեջ, չուր մուք տա, նոր էլիմ էրթամ գողնամ ծին:

Փշում նստավ գյերեզմներու մեջ, տեսավ օր մարթ մի խազաց. ասաց. - Եսի վո՞ն ա էսա գյախ էկի նստի էսա գյերեզմներու մեջ:

Ես կասի. - Քըն ծիկ կտրեճ մարթ չկա: Վալա, ես տ'էլիմ, էրթամ, էս մարթ տեսիմ, էտ վո՞ն ա, օր քըն ծիկ կտրիճ ա:

Գնաց տեսավ օր Ախքնաճորու Ահմադ աղեն է:

Ասաց. - Պարի իրիգուն քյե. Ահմադ աղա, դու էստե՞ղ:

Ասաց. - Էգել իմ Զասան աղի ծիու գողութին:

Չրի աղեն ասաց. - Ահմադ աղա, ես էլ էկեր իմ էտ ծիու գողութին:

Ասաց. - Այա էտ ի՞մալ կ'էղի:

Ահմադ աղեն ասաց. - Էնոր ծիուն քուռակ մ'էլ կա. էրթանք գողնանք: Կուգես դու քուռակ վերցու, կուգես ծին վերցու: Մեկն ընծի, մեկըն քեզի:

- Շատ աղեկ, ախպեր, շատ աղեկ:

Ասաց. - Դժռ շուտ է, էսա գյախ մընք էրթանք:

Ասաց. - Ահմադ աղա, գլխու գյալած չունի՞ս: Փշում կըսա էրա, միհնչև մութ տա:

- Շատ աղեկ, Չրի աղա, շատ աղեկ: Գլխու գալած կա ընծի: Ես էլա ուրիշ տեղ մի գացի գողութիւնի: Գացի մտա գյերեզմներու մեջ: Ասի՝ նստիմ էստեղ, ջըղարե մի քաշիմ, էրթամ: Ես նստա, ջըղարե մի քաշեցի, տեսա օր ծանդր տըքոց մ'էկավ, գյերեզմներու միջեմ: Էլա ընգա գյերեզմներու մեջ, շուտ էկա: Թաժաժ գյերեզման մի գտա, իմ անգաջ տրի էտ գյերեզմին՝ տեսա օր տըքոց էր գյերեզմնեն կուգեր:

Շատ գյերեզման քանդի, մեկ համա գյերեզմնի մեջեմ էլավ նստավ: Դամա շուտ պոնի էտոր պատանք պատռի: Խանեցի իմ շապիկն ու թումբան էտոր խաքուցի:

Ասի. - Տղա, դուն ի՞նչ իս:

Ասաց. - Ես խայ իմ:

- Քու անուն ի՞նչ ա, տղա:

Ասաց. - Իմ անուն Կարո յա:

Ասի. - Կարո, էտ ի՞նչ եղիր քըզի:

Ասաց. - Չըմ գիտեր ինչ էդեր ընծի: Սիաթ անցիր վըր ծի, ինչ էդիր ընծի, ընծի պերած խորած ա:

- Կարո, դու վի՞ր տղեն իս:

Կասա. - Ես էսա գյեղի աղի տղեն իմ: Ես,- կասա,- իմ խոր մեկ իմ: Ընծի էլ իրեք քուր կա:

- Կարո, - կասա, - դու ծեր տուն գիտե՞ս:

- Վա՛խ, աղա, ի՞նչ կասես: Եսի մեր գյերեզմին ա: Մեր տուն ես չգի՞տեմ էրթամ:

- Կարո, - կասա, - դե էլի, քըզի առնիմ տանիմ ծըր տուն:

- Խա, աղա: Կայնի, քյեզի պան սորվըցում, նոր ընծի տար մըր տուն:

Ահմադ աղեն ասաց. - Կարո, մեռիմ քյեզի, ընծի սովորու տեսիմք:

Կարոն ասաց. - Ընծի կառիս էրթաս իմ խոր հօդի դռներ ու ծիուց կ'իջիս. ծիու վերեմ չը խարցուս, մեր աղաթ չկա: Էնոնք ծին կը տանին, յարթն ու քարին կիտան: Դու ծիու համար կասաֆաթ չ'ենիս: Ընծի պախա տռան հետև, դու քնա մտի հօդեն, օր մտար հօդեն զըմեն ժողված ան հօդեն, ուրանց միյաթն էրած, նստած ա: Դու հու մեկից ծը մի- չ'էլի: Իմ խերն էլ վերին դէխ բուխերկի կուշտ նստուկ ա, կապուտ սաքոն վրեն, կայլոն ծեռն, նստեր, կայլոն կը քաշա: Դու կ'երթաս, կը մտիս ներս. օր դու

մտար ներս, քեզի տեղ կուտան, դու էնոնց մոտեն կը խարցուս, կասես.
«Գյալո, էտ ի՞նչ էղիր ա ձեզի»:

Էնոնք կասեն. - Ի՞նչ քու պան ա: Դու կունախ մարթ մ' ես: Գյիշեր
քնի: Խլխուլն էլի, քնա քու ճամբխու խետ:

Դու ասա. - Չէ, կը խնդրեմ ձեզնե օր ես էլ հիմնամ' ի՞նչ կեղնի:

Էնոնք կասեն. - Ջանըմ, մըր աղեն ինքն էր մեկ տղա, էնոր տղեն
հէսօր մեռեր ա, մենք հմենքս էլ սուք ենք, էնոր վրեն:

Դու ասա. - Ի՞նչ կուտաք ընծի, ձեր աղի տղեն բերեմ: Էնոնք կը հեռ-
ստտին վըր քեզի, կ'ասեն, ի՞նչ քո գլխուց դուս կիտաս: Աղի տղեն խլխուլն
ա մեռիր, դու կ'ասես, ես էրթամ պերիմ:

Դու ասա. - Վալահ, կը պերիմ:

Էնոնք իրարու խետ կը զրուցին, ձեն կերթա կը խասի իմ խոր. իմ խեր
կը լսա:

Իմ խեր կասա. - Վա՛խ, վա՛խ, էտ վո՞ն ա էտ խոսք կասա: Էղեր օր ես
մեզել իմ տղի էրես տեսի: Գալո էտ խոսք ասող վո՞ն ա: Էտ խոսք ասող
պերեք իմ մոտ:

Խըլ կանեն, մեկ կարիք մարթ մը էգիր ա: Էնի ասաց:

Կասա. - Էն կարիք մարթ վո՞ն ա, պերեք իմ մոտ, տեսինք: Դու կ'էլիս
կ'երթաս իմ խոր մոտ: Իմ խեր քեզնից կը խարցու. «Դու խրիշտա՛կ ես, օր
իմ տղին կը պերիս: Իմ տղեն խլխուլն ա մեռիր ա, տարեր ինք խորի ինք:
Դու ի՞մալ իմ տղեն կը պերիս»: Դու ընծի կանչա. «Կարո՛, Կարո՛, արե»: Ես
կուզամ, ես օր էկա կալաքալըխ կընգ'ի էնոնց մեջ: Էնոնք ընծի կը
վիրուլն, կը տանին: Էլ վըր քեզի չխարցուն: Էնոնց թուրուներու քյիսկնիր
զըմեն կը մնա դան, որ մեկ քիսկից քու քեքՖ կ'ուզա, դալլոն լից, քաշա: Էն
օր էլ չուր լուս չ'գան քու մոտ: Խլխուլն օր էղալ հմեն ամեկ ուր տիմով ուր
ձեռնեն ինչ օր էլի փարա կը լցին քյիսկներու մեջ, կպերին տնին քու
անոն: Էտ փարեք հմեն կը վերուս, հմենի էտ իմ խեր կուզա: Իմ խերն օր
էկալ (ես էլ իմ խոր հետև կուզամ), - իմ խրիշտակ, դու հու՛ր էկար ընծի
խասար:

Իմ սրտի ուրախութիւն, Կարոն ընծի պերիր: Դու քու տեղ նստի: Իմ
խեր զուր գեղական զըմեն կը ժողվա, խացի պատրաստութիւն կը տեսի,
ուր գյեղական զըմեն կը կանչա: Կ'ասա «Արե՛ք, պարի տրկիցներ, էրեկ
Կարո խոքու խաց կերաք, հէսօր էլ Կարո ուրախութենի խաց կերեք ու
եսա մարթուն օխենք»: Իրեք օրեն ետ, իմ խեր քյիզեն կը խարցու, կասա.
«Դու իմ սիրտն ուրախացուցիր: Դու ուզա օր ես քեզի տամ, ու քու սիրտն
էլ ուրախցուն»:

Դու ասա. «Քյեզնե պան չըմ ուզիր, դու սաղ մնաս ու քու տղեն: Մինակ քու պստիկ ախչիկ տու ընծի»: Իմ խեր կասա. «Վըր իմ էրկու աչին, ախչիկս քեզի դուրքան էլի, դու ուզա օր ես քեզի իմ ամեն ունեցած տամ»: Դու ասա. «Քու ունեցած քեզի բումբարուք էլի, ես աշխրի մալ շատ ունիմ: Մինակ քու ախչիկ տաս ընծի՝ խերիք ա: Իմ խրատն էս ա քեզի, աղա: Էլի, ընծի առ ու գնա»:

Առավ, էկավ ու տռան հետև պախեց: Մտավ հողեն:

Ուր ասած խոսքեր կատարվավ, տղի հայրն ասաց խլիսուն. - Քո խարսանըքի պատրաստութիւն կ'էնիմ, քեզի կը պըսակիմ:

Պերեց ուր ախչիկ պսակեց վերեն: Ահմադ աղեն տաս տարի մնաց էնտեղ: Աստված էրկու տղա տվեց Ահմադ աղին: Ահմադ աղեն էն մեկ օր մտածեց. ուր տուն, ուր խեր, ուր մեր ընգան ուր միտ, շատ ախ քաշեց էնտեղ:

- Չէ, - ասաց, - ես էլ գեղի մի աղա յի, ես էկա էստեղ իմ խեր ու մեր մոռցա: Վալա, ես պիտի էլիմ խլիսուն իմ աներոջ ասեմ, ես պիտի էրթամ իմ հայրենիք, իմ խեր ու մեր ընկեր իմ միտ: Տեսի՞նք իմ աներ ի՞նչ քույաք կիտա ընծի:

Խլըսուն էլավ քնաց աներոջն ասաց. - Ես էլ գյեղի մը ճոչ եմ:

Աներն ասաց. - Լաո, դու հորի՞ կ'էրթաս, դու իմ անուշ Գարոն պերեցիր ընծի: Չէ՞ դուն էլ իմ Գարո ճոչ ախպերն ես:

Աներոջ ասաց. - Չէ, կը խընթրիմ, օր ինձ հրաման տաս, ես էրթամ:

Աներ ասաց. - Լաո, քյանիմ օր սաքր էրա, քու պակասութիւն տեսիմ, Ասպած քո պան հաճող ա:

Տասն օր մնաց էնտեղ, էնոր հմեն պան պատրաստեց, պընեց քառսուն ծիու պեռ հուր ու մուր, քառսուն էլ մարթ տրեց խետ, ասաց. - Էլի, գնա, Ասպած քո պան հաճողա:

Ու էլա ես իմ աներոջ ծեռ պաքեցի, ընգան ճամբախն ու էկա: Չրի աղա, աղեկ լսի իմ գլխու գալած: Երկու ավուր ճամբախ էկա, ասի. - Ես էս քառսուն մարթ տանիմ խըտ ընծի, ի՞նչ էնիմ: Էտնք, իրեք հոքով ջորով մեկ պեռ պանման:

Էտ մարտիկաց հիզին տվեցի, ասի. «Ետ տարցեք քացեք ձեր տներ: Իմ տեղն հեռուն ա»:

Էտոնք ասին. - Չէ, մենք աներոջ մոտեն կը վախենանք, ի՞մալ ետ տանմանք:

Ես թուխք մի գրեցի տվեցի էտոնց ասի. - Գացեք, իմ աներոջ մոտեն մի վախենաք:

ենոնք տանոցան քանցին, ես իմ պեռներ տվի իմ հառճև էկա: Շատ էկա, քիչ էկա, Աստված գիտե, էկա իրիկուն պուք տվեց վերես: Սարի մեջտեղն էլ մեկ խան մի կեր, ասի. - Կընիկ, էրթանք ես խանի մեջ գիշեր չոխեղդինք խլխուն էլնինք, էրթանք:

Իմ կնիկ ասաց. - Շատ աղեկ:

Գանցինք մտանք խանի մեջ, խան տանտակ, մարթ չկա հինի: Իմ պեռնիր թափիցի, իմ ծիանքներուն դարմանն տվեցի, էկա իմ տեղաց վերեն նստա:

Ասի. «Կնիկ, փշու մի խաց քիր, ուտինք»: Իմ կնիկ խաց պերեց տրից, մինք կերանք, էրկու պրտուճ կերանք, մեկ էլ տեսա օր տա էն մեկ քընքնեն մեկ փոճոտ մարթ մ' էլավ, էկավ: Համա զարկից միր առճենն մըր խաց վիրուց ու տարավ: Ես շատ զարմացա ըտտիդ: Ասի. - Կնիկ, կեղի օր անոթի մարթ ա: Թըխ տանի, պան չըկա:

Իմ կնիկն էլավ մեկել խաց պիրից մեզի, էրկու պրտուճ կիրանք, մեկ էլ էկավ զարկից տարավ: Էլ մ' ասի. - Կնիկ, պան չըկա: Մեկ էլ պիր, մընք խաց ուտինք:

Իմ կնիկ մեկել օր խաց պերից, մեկ էլ էտի էկավ, օր էկավ, համա իմ սիրտն էլավ, ծեռ թալի, էտոր թև պոնի, ասի. «Չուր ե"փ տու իմ խաց տանիս, չէ" ես Ահմադ աղեն իմ»: Համա տիսա որ փողերու միչեն կը դամե մի քաշից զանկից իմ փոր թափից, զանկից իմ էրկու տղեն էլ սպանից, իմ կնիկ գրկեց ու նստավ:

Իմ կնիկ ինչ էրաց, էլ էտոր ծեռքեն չկարցավ պոծեր էր: Ես էլ խեղճ-խեղճ կ'աչքիմ: Դուսն էլ էնպես ցուրտ ըշքի օր մ' է, խանի դուռն էլ էմալ գետ մի ջուր կ' էրթա, իմ կնիկն էլ ասաց. «Դուսն ու քու Աստված, էլի գնա էտ գետի մեջ լողկցի վ'արե, իմ տղեկնիր սպանիր, վ' իմ իրիկն էլ սպանիր, ես քոն իմ: Էլ ես դո"ր կ' էրթամ»:

Էտ մարթն էլավ ու քնաց: Օր էլավ քնաց, իմ կնիկն էլ, էլ դու գողի մը մընա, էլավ դուռ փակից վերեն, պերից էտ պեռնիր զըմեն լցից տռան հետև:

Մի կես սղիանք մնաց, էտ մարթն էկավ առավ տռան, ինչ էրաց տուռ չկարցավ պանցեր էր: Համա ծեռ մլեց տռան տակ, իմ կնիկ համա կամեն տրից ծեռաց օրթալախ, ու զինք թալից վերեն, սանհանք մի գախ բռնաց, բռնաց ու ծեն կտրավ:

Մենք իմացանք օր էտի մեռավ, պըռճանք էտորից: Իմ կնիկ տանոցավ էկավ վըր ընծի: Պերից կրակ էրաց ու ընծի տաքցուց, ընծի փաթուփից, գիշեր մնացինք էնտեղ: Էտ խըլխուն բազրկա մի կուգա: Դու մ' ասի օր բազրկան գիտա օր էտտեղ ջանավար կա, մենք խաբար չունինք:

Բագրկան կասա. - Տղա՛, քնցեք տիսեք, էտ ջաննավար էտ դարու քա՞րն ա, մինք ընցինք, էրթանք:

Կուզան, կը տեսին օր ջաննավար խանի դուռ պառկուկ ա: Բագրկան կասա. - Չորս-խինգ մարթ էլեք քացեք, կ' էղի օր էնի քնուկ կ' էղի, բալքի թըվընքով զանիք, զէնի սպանիք:

Խինգ մարթ կ' էլին ու կուզան, կուզան ու զէտի կուտան ձեռքն թըվընքի: Մոտիկ խարիթ դըրթ էտոր կը զարնին, էտիկ ուր տիղեն հիրար չ'առի:

- Ջանըմ, - կասին, - էտի սատկուկ ա, էրթանք վերեն տեսինք:

Կուզան կը տեսին, օր սատկուկ ա, ծեռ մլեր տռան տակ: Կ' էրթան աղին կասին. - Աղա՛, ջաննավար սատկուկ ա:

Կասա. - Տղենիր, դե քչեք, էրթանք տեսինք:

(Չրի աղա, կասա, շիտակ անգաջ էրա իմ գլխու գալած):

Ես մեկել զէ՛ն տեսա օր զանգուկի ձեն էկավ: Էկավ ու առավ տռան: Ասին, վո՞ն կա էս խանի մեչ, դուռ պացեք: Ըսկի մը վախենաք, մենք բագրկան ինք: Ջաննավարն էլ էստեղ սատկիր ա:

Իմ կնիկն էլավ ու շուտով դուռ բացից: Բագրկան էկավ լցվավ հինի: Դու մ'ասիր բագրկանապաշին աղեկ հեքյիմ ա, օր էկավ ընծի տեսավ, իմ կնիկ զինք թալից վըր էնոր ոտաց, ասաց. - Աստծու սիրուն էղի, իմ մարդուն ճար մ'էնիս:

Ասաց. - Քուրիկ, մի՛ վախենա: Կավլ էղի հանեմ Աստղծու, ես մինչև քու իրիկ չսաղցում, էստիղեն պիտի չէրթամ: Ես հեքյիմ իմ:

Քառսուն օր մնաց վըր ծի բազըկան: Էնտեղ ընծի սաղցուց, ուր խետն առավ էկավ, պերից իմ տուն, ընծի իմ տուն թասլիմ էրաց, ու էս էլ իմ կընգան աղեկութիւն, օր ընծի էրաց: Դալա ես իմ կնիկ մեկտիղ կ'ապրինք: Իմ գլխու գալածն էս ա, Չրի աղա, օր քեզի ասեցի:

Տաննանք Չրի աղին: Չրի աղեն ասաց. - Ահմադ աղա, դըռ շո՛ւտ ա: Ես էլ իմ գլխու գալածն ասին: Տեսինք:

Քու ասածի պես ես էլ էլա՛ գացի մեկտեղեն գողութիւն: Լուսցավ վըրես, էլ չկարցա գացիրի գողութիւն էրիր ի: Մացի անոթի, ես էլ էլա՛ ասի էրթամ գեղ մի խաց ուտիմ: Ես գացի մտա էտ գեղի մեչ, օրն էղավ կեսօր, է՛ գեղի տավար, օջիսար հըմեն մըչ գեղին են: Ասիցի՝ ջա՛նըմ, էսա կեսօր էղավ, ձըր տավար, օջիսար հորի՞ գեղեն չխանեք:

Ընծի ասեցին՝ էսօր տասն օր մեկ վիշափ մա փայդա էղիր մըր գեղի պուր, էտ վիշփու հախուն մենք չընք իշխնա էլի դուս: Ընծի էմալ մեկ ցավմ՝ էղավ: «Ջանըմ, - ասեցի, - էս գեղի մեչ մեկ չկա, օր էրթա էտ վիշափ

հանրաքա»: Քանցի էտոնց մոտեն խարցուցի, ասի՝ էտ վիշափի ո՞րտեղն ա: Ասի՜մ՝ ահա էս սարի կողն ա:

Էլա՛, հիշացի՛ իմ Աստված, յա պտի էսօր վիշափ ընծի ուտա, յա պտի ես վիշափի հէսօր սպանիմ:

Էլա քանցի թղս վիշափ: Ես օր գացի, վիշափն ընծի օր տիսավ, վիշափն համա կլոխ վիրուց ու էկավ խ՛ընծի:

Ես իմ թուր քաշեցի, ու իմ աքեն փաթթիցի իմ թրի օրթալխին, ու էսպես իմ թուր պըռնիցի ու քանցի: Վիշափն օր էկավ, թուր տվի վիշփու պերան, վիշափն ուժից, ու ես ուժեցի: Վիշափն էրիցի էրկու կտոր, ու թրի պալլըխ պոնիցի ընգա վըր վիշփուն, վիշափ սերսուփ մանրիցի, վիշափու անգջնիր կտրի ու թալի իմ ջեբ: Դարցա էկա գիղի մեջ:

Ասի. - Զիր տավար, օջխար գեղից խանեք, թ՛էրթան արածան, վիշփուց մը վախի՜նաք, ես կու գամ ձիր խետ:

Ես էտ կսի մեչն ի, մեկ էլ տիսա օր մեկ մարթ էնդիխեն բոռալով կուզա՛՝ անգջկլիս ձիգի, վիշափ սպանած, անգջկլիս ձիգի, վիշափ սպանած: Էտ գեղի աղեն կանչից, ասաց. - Գ՛ալո, էս վիշափու սպանող ո՞րն ա, ընծի պիրեք:

Ասիմ. - Զընք գիտի վո՞ն ա, մենք տեսանք ձիավոր մ՛ էնդիխեն էկավ, էնի դարիք ձիավոր էր, քացիմք տիսանք օր վիշափ սպանուկ էր: Էլ չընք գիտիր էն ա սպանիր, թե՞ ուրիշներն ա սպանած:

Աղեն ասաց. - Էտ դարիք ձիավոր վի՞ր տուն է կիր ա: Քանցեք գտեք ընծի պիրեք: Անմաղ աղա, իմ գլխու գալած դուն էլ աղեկ անգաջ էրա:

Էկան ընծի գտան, առան գացին, աղի մոտ: Աղեն ասաց. - Դու ո՞ր տեղացի ես:

Ասիցի. - Ես կարիք եմ:

Աղեն ընծի ասաց. - Ես վիշափ սպանող դու իս:

Ասիցի. - Աղա՛, կեղի օր ես եղիմ:

Խանեցի անգջնիր, ուրան տվիցի: Աղեն պոնից իմ ճակատ պաքից, ասաց. - Իմալ դու էս քաղաքն ազատեցիր, Աստվածն էլ քեզի՛ ազատա: Դե արի՛ ուզա օր քեզի տամ:

Ասի. - Աղա՛, ես քեզնե պան չըմ ուզիր:

Ասաց. - Դու պտի եղիս ընծի որդի, ու պիտի մնաս ընծի մոտ: Ես էրկու տղա ունիմ, դու էլ վերեն մնաս, կ՛եղի իրեք, իմ ախչիկն էլ պիտի պըսակիմ վըր քըզի:

Ես մտածեցի. «Ջանը՛մ, ես էլ մեկ էլիմ՝ աղա իմ, ի՞նչպես մնամ էստեղ: Ախր ես էլ տան տեր իմ, կնիկ-ճժու տեր իմ: Կայնի խլըսուն ես էս

ախչիկ էլ տեսիմ, տեսիմք էսոր ախչիկ ի՞մալ ախչիկ ա: Թե իմ սիրտ թռնից՝ պտի առնիմ, էլ ի՞նչ էնիմ»:

Ասի. - Աղա՛, մեկ չորս-խինգ օր ընծի ժամանակ տուր: Ես քեզի քույրք կուտամ:

Խինգ օրն օրտա թըմալ ախչիկ տեսա, միթևսի փոխվալ: Ու էլա աղին խաբար տվի, ասի. - Աղա՛, պտի առիմ քու ախչիկ:

Ախչիկ պերից, ինծ վրա պսակից: Մի տաս տարի էնտեղ մնացի: Աստված ընծի իրեք խատ էլ տղա տվից:

Ահմադ աղա, իմ գլխու գալած շիտակ անգաջ էրա:

Էն մեկ օր իմ միտք փոխալ, ասի՝ վալա, ես իմ աներոջ մոտեն պտի իզին առիմ ու էրթամ, խերիք ա մնամ էսա տեղ: Էլա ու ըշտակ քնցի իմ աներոջ մոտ, ասի՝ ես մայամ կէրթամ իմ տուն:

Ասաց. - Որդի, դու հորի՞ կ' էրթա:

Ասի. - Իմ խեր ու մեր ընգած իմ միտ: Ես չըմ կայնիր էսա տեղ:

Ասաց. - Դե էրկու օր, իրեք օր ընծի սաքր էրա, քու պատրաստութիւն տեսիմ, էլի գնա:

Իրեք օր մնացի ընտեղ, վըր չորս ավուր էլա ընգա ճամբախ: Մարթ պատրաստիր էր օր դներ իմ խետ:

Ես ասի. - Չէ՛, մարթ, չըմ ուզի:

Տաս խատ ծի պարցի, իմ մանդր-մունդր պարցի զըմեն վրեն, իմ աներոջ ծեռ պաքի ընգա ճամբախ:

Էկա, խինգ օր ճամբախ էկա, էկա սարի գլոխ, մութ տվից վերես, տեսա օր թե սարի գլոխ մեկ տուն՝ մի էրեվաց:

Ասի. - Կնիկ, գիշեր էրթանք մնանք էսա տուն, խլըսուն էլինք էրթանք:

Մինք քնցինք էտ տան տուռ կայնանք, մեկ էլ զէն տեսա օրթա քիել մի էն տնեն էլալ: Թեվիր չուր էսա տիղ քշտուկ, համա գիմ պեռներ առալ ու տարալ տրից նիրս: Տարալ տեխ թալեց, ընծի, իմ կնիկ ու ճփրն տրից վերեն, ասաց՝ դե դուք նստեք ոհաթեք, չուր ես ծիանքներուն դարման տամ ու գնմ:

Գնաց ծիանքներուն դարման տվեց, էկալ մեզի ասաց՝ անոթի չի՞ք, ծիզի խաց պիրիմ:

Ասինք. - Դե հալքաթ անոթի ինք:

Էլալ միզի լանգանի մի փլալ պիրեց, սոխառած վրեն, լանգանի մ'էլ ավխաթ, նստանք էնտեղ, մըր խաց կիրանք:

Սիւնք մ' էրկու ետտիղ նստանք, ժողւանք, ընծի ասաց. - Դու նեղեցուկ իք, էլի նըստի էնա մեկ դիխ, ծեր տեղ թալիմ, պառկեք, քո ճօրի խեղճ ին:

Ես էլ միամիտ էլա, օրդնի վերեն նստան: Խըտ նստելուն՝ քացի խորու մեչ, տեսա օր խոր լիք ջանդանկ ա: Էդ ջանդկներ, աչքեցի, հմենի մեչքեր ծակ էր: Ես մեկ էլ գէն տեսա, օր իմ մեկ տղի քլոխն էկավ: Քիչ մ' էլ մացի, տեսա օր էն մեկել տղի քլոխն էլ էկավ: Քիչ մ' էլ մացի, տեսա օր էրկսի ջանդանկն էլ էկավ:

Ասի՝ վալա, պտի ես օղիաթ իմ գլխուն էլ խանա: Ես ջանդկների վիրցի գըմեն, մտա ջանդկներու տակ, մեկել գէն տեսա, օր կարմիր շիշ մի էկավ, օր գարկից ջանդկին, ես տքացի, իմ ձեն կտրի: Էն շիշ քաշից, ես էլա ջանդկների մեկ-մեկ տրի իմ օտներու տակ, էլա աչքիցի օր ինքն ու իմ կնիկ փաթթված հիրուր, էմալ ուրախութիւն մի կէնին, ինչպէս օր քսան տարվան փսակած էղնին:

Իմ քիզարս մըչ փորուս կը կտըռտի, իմ ծեռ ճար չըկա:

Ահմադ աղա, իմ գլխու գալածն էլ շիտակ անգաջ էրա: Տե՛ս թե իմ կընգան բախտն իմա՞լ էր:

Ես ձեն չէրեցի էլ: Երկու իրեք սիւնք ետոնք խըտ իրարի ուրախութիւն էրիցին. փաթթվան հիրուր ու քնան: Ես ուշիկ էլա: Տեսա օր քնուկ ին էրկուսն էլ: Իմ կնիկ ծեռ տրեք էր էնոր քլխու տակ ու քներ էր:

Քացի ծիռ թալեցի, էնոր կոլամեն գլխու տկեն քաշի, ասի. «Ես գարնիմ էտոր վիզ կտրիմ արի տես իմ կնգան ծիռ խետ կտրվի: Ասի. - Վոլա, պտի իմ կնգան ծեռ էնոր քլխու տկեն խանիմ: Վախճամ հիմնա, ես չկանամ վրեն: Ուր քյեֆն ա, կանամ չկանամ, ծեռ քլխու տկեն կը խանիմ:

Իմ կնգան ծեռ ուշիկ մը գլխու տկեն խանեցի, տրեցի վըր վզին ու լանգեն զարկեցի վըր կամին, նա բոռաց ու շիթկավ, ծեռ թալից իմ ճա-կատ, իմ ճակատ լոպկից, անա էլ էնոր ծիռաց յարեն ա, թի չըս ավատա, էսա իմ գլուխն էլ էնոր ծիռաց յարեն ա:

Ու տվի հառճն կամի ու պրտի ու լցի խորուն մեչ էնոր ջանդանկ: Ասի. - Դու շատ մարթ իս սպաներ իս: Չէ՞ ես էլ քեզի սպանեցի, ջանդանկն թե դու իմ տղեկնիր սպաներ իս:

Իմ կնիկ քաշվավ մեկ դիխ, կանգնավ ու էլաց, էլա ընգան կնգանսի վիզը վիր. կնիկ, դու հորի՞ կասաֆաթ կ'ենիս, բալքիմ թե ես պան Աստոնց էր մեզի էկեր էր: Թե քո տղեկնիր հապով կասաֆաթ կ'ենիս, Աստված մեզի տղա կուտա: Չէ օր դու քեզի համար կասաֆաթ կ'ենիս, քիզի համար կասաֆաթ մ'ենիր: Եսա խոսք պտի մըչ ընծի մըչ քզի մնա, չուր մինք մեռնինք:

էլ ինչ երիցի, կնիկս ի չգրուցից:

- Կնիկ, - ասի, - ախրը իմ պատասխան տուր:

Կնիկն ասաց. - Ախրը, ի՞նչ քո պատասխան տամ, ի՞մալ քո ծիռաց պոնից դու ես խրիղեն քիելն սպանեցիր:

- Տո կնիկ, ես քեզի տժար չէկա, քո տղեկնիր տժար չէկան, ես մեկ սինթ դու պառկար էտոր մոտ, էսի քեզի տժա՞ր էկավ:

Ահա, Ահմադ աղա, տիս իմ կնգան բախտ: Իմ կնիկ ես ըմլա պան խաղաց իմ գլխուն:

Ես էլ ծիռ թալի կնգան ծամիր ու զկնիկ տվիցի աճա կամի, ու կնգան ջանդան պիրիցի խառնիցի են մարթու ջանդկի հիտ, ու էլա ենտիղեն ինչքան օր մալ ու ապրանք ժողվեր էր ու լցիր էր, էլա գմեն պարցի ծիանքներու վրեն ու առա գանցի իմ տուն:

Ահա իմ գլխու գանլած էլ ես ա, օր քեզի ասեցի: Մեկ էլ տեսան օր աղոթրան պանցվալ, լուսցավ:

Ասաց. - Էսի լուսացավ: Մենք ի՞մալ ենինք:

Ահմադ աղեն ասաց. - Չրի աղա, էլի դեմ քչինք էրթանք էտ մարթու դուռ, ասինք մինք էկիր ինք քու ծիանք հապով: Տեսինք էտ մարթ մեզի ի՞նչ ջուլար կուտա, թե ծին տվից մեկիս, քուռակ տվից մեկիս, գանթի կ'առինք էրթանք, օր չտվից, վանդ կիշիր կուգանք զեն էլ կը սպանինք ու կառինք ծին էլ ու քուռակն էլ, կ'երթանք:

Էլան շիտակ էկան էտ մարդու տուն: Էտ մարթ տեսավ օր երկու խատ խորոտ ծիավոր էկան, էքից հինի, օր քիելնիր էմալ ըսկի չկին:

Ասաց. - Տղա՛, ենոնց ծիանքներու քլոխ պոնիք, թ' ենոնք իծին:

Ահմադ աղեն ասաց. - Չէ, աղա, մենք չիծինք:

Աղեն ասաց. - Դո՞րի չիծինք:

Չրի աղեն ասաց. - Մեզի խնդիրք կա մըտ քըզի, օր մըր խնդիրք կատարիս, կիծինք:

Աղեն ասաց. - Ձեր խնդիրքն ի՞նչ ա:

Ասաց. - Մեր խնդիրքն էն ա, օր քո ծին տաս մեկիս, քուռակն էլ տաս մեկիս:

Աղեն էլ հինք նամարդ մարթ չէր, մարդ մարթ էր: Ասաց. - Իճեք, վըր իմ աչից, ծի մ' ու քուռակ մա թառի ծիր կյաղեն:

Էտ մարթիկ իճան: Էտ օր մնացին էտա տիղ, աղեն էլավ ծին էլ, քուռակ էլ թամբից, գյամից, պերից քաշից էտոնց հանեմ:

Ասաց. - Դե հրամիցեք:

Էտանք էլ ասեցին. - Կանի աղեն պիտի փորցինք, տեսնինք ի՞նչ պտի ասա:

Ասին. - Աղա, քո ծիաքներու գին ի՞նչ ա:

Ասաց. - Դ արցեք, դեմակ դուք էկեր իք իմ ծիանք կը գնիք, դու չգիտի՞ք օր իմ ծիանքնիրու գին չկա: Ես ծիր ջըհելութինի խաթրին իմ ծիանք պանխշեցի ձեզի:

Էլան աղից շնորհակալ եղան, էկան քանցին իրանց տնիր:

Աստծուց իճավ իրիք խնծոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ քյուլլի չաղամաթին:

